

Հենոֆիլուս Ինֆլուանզա b Տիպի (Hib) Պատվաստ

Ի՞նչ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՔ

1 Ի՞նչ է Hib հիվանդությունը

Հենոֆիլուս Ինֆլուանզա b տիպի (Hib) հիվանդությունը մանրեներից առաջացած լուրջ հիվանդություն է: Այն սովորաբար հարվածում է 5 տարեկանից ցած երեխաներին:

Չեր երեխան կարող է ձեռք բերել հիվանդություն լինելով ուրիշ երեխաների կամ չափահասների շուրջ որոնք վարակված են մանրեով և տեղյակ չեն դրա մասին: Սերմաբջիջները տարածվում են անհատից անհատ: Եթե սերմաբջիջները մնան երեխայի քթում և կոկորդում, երեխան հավանաբար չիվանդանա: Սակայն երբեմն սերմաբջիջները տարածված են լինում թոքերի և արյան շրջանառության մեջ՝ Hib-ն առաջացնում է լուրջ բարդություններ:

Նախկան Hib պատվաստի գոյություն ունենալը, Միացյալ Նահանգներում 5 տարեկանից փոքր երեխաների մոտ, Hib հիվանդությունը եղել է մանրեային մենենգիտի գլխավոր պատճառներից մեկը: Մենենգիտը ուղեղային և ողնաշարային թաղանթի վարակումն է որը կարող է առաջացնել մշտական ուղեղի վնասվածք և խլություն: Hib հիվանդությունը նոյնպես կարող է պատճառել.

- թոքաբորբ
- շնչառությունը դժվարացնող կոկորդի ծայրաստիճան ուռուցք
- արյան, հոդերի, ոսկորների և սրտային թաղանթի վարակ
- մահ



Hib պատվաստի գոյություն ունենալուց առաջ, Միացյալ Նահանգներում 5 տարեկանից փոքր 20,000 երեխաներ, ամեն տարի, վարակվել են Hib հիվանդությամբ, որոնցից մոտ 1,000-ը մահացել են:

Hib պատվաստը կարող է կանխել Hib հիվանդությունից:

Շատ ավելի երեխաներ կարող են վարակվել Hib հիվանդությամբ եթե պատվաստումը դադարեցնենք:

2 Ո՞վ պետք է ընդունի Hib պատվաստ և ե՞րբ

Երեխաները Hib պատվաստ պետք է ընդունեն ներոհիշյալ տարրիքներում.

- ✓ 2 ամսական հասակում
- ✓ 4 ամսական հասակում
- ✓ 6 ամսական հասակում*
- ✓ 12-15 ամսական հասակում

* Օգտագործվող Hib պատվաստի տեսակից կախված, հավանաբար ձեր երեխան 6 ամսական հասակում ստանալիք դեղաչափի կարիքը չունենա: Չեր բժիշկը կամ բուժքույրը ձեզ կհայտնեն եթե այս դեղաչափը ընդունելու կարիքը զգացվի:

Եթե դուք բաց եք թողել դեղաչափը կամ ժամանակացուցակից ետ եք մնացել, հաջորդ դեղաչափը ընդունեք անմիջապես: Կարիք չկա նորից սկսելու:

Hib պատվաստը կարելի է ընդունել տարբեր պատվաստների հետ միաժամանակ:

Մեծահասակ Երեխաներ և Չափահասներ

Սովորաբար 5 տարեկանից բարձր երեխաները Hib պատվաստի կարիքը չունեն: Բայց հատուկ առողջական վիճակների մեջ գտնվող մեծ տարիքի որոշ երեխաներ կամ չափահասներ պետք է ընդունեն պատվաստը: Վերոհիշյալ առողջական վիճակների մեջ ընդգրկվում են մանգաղանման բջիջների (sickle cells) հիվանդությունը, HIV/AIDS-ը, փայծաղի հեռացումը, ոսկրածուծի փոխատեղադրումը կամ քաղցկեղի դեղորայքով բուժումը: Մանրամասնությունների մասին իմացեք ձեր բժիշկից կամ բուժքրոջից:

3 Ոմանք Hib պատվաստ պետք չէ ընդունեն կամ պետք է սպասեն

- Անհատներ որոնք երբեւէ ունեցել են Hib պատվաստի նախապես ընդունված դեղաչափի դեմ կյանքի սպառնացող գերզգայնական հակազդեցություն՝ չպետք է ստանան ուրիշ դեղաչափ:
- 6 շաբաթականից ավելի փոքր երեխաներ չպետք է ստանան Hib պատվաստ:
- Անհատներ որոնք թեթևակի կամ լուրջ հիվանդ են պատվաստի ընդունման ժամանակ, ընդհանրապես պետք է սպասեն մինչև ապաքինում, նախկան Hib պատվաստ ընդունելը:

Տեղեկությունների համար հարցրեք բժիշկին կամ բուժքրոջը:

4

Որո՞նք են Hib պատվաստի վտանգները

Որեւէ պատվաստ, ինչպես որեւէ այլ դեղամիջոց, ունակ է պատճառելու լուրջ բարդություններ, ինչպիսիք են լուրջ գերզգայնական հակազդեցությունները: Hib պատվաստի լուրջ վնաս կամ մահ պատճառելու վտանգը չափազանց փոքր է:

Hib պատվաստ ստացող գրեթե բոլոր մարդիկ բարդություններ երբեք չեն ունենում:

Թեթեւ բարդություններ

- Կարմրություն, տաքություն, կամ ուռեցք պատվաստի տրված մասում (երեխաների մինչեւ 1/4-ի մոտ)
- 101° F-ից բարձր ջերմություն (20 երեխաներից 1-ի մոտ)



Եթե այս բարդությունները պատահեն, ապա նրանք սկսվում են պատվաստման առաջին օրից: Նրանք կարող են տեւել 2-3 օրեր:

5

Ի՞նչ անել մեղմ կամ սուր հակազդեցության դեպքերում

Ինչի՞ն պետք է ուշադրություն դարձնեմ

Որեւէ արտասովոր վիճակ, ինչպիսիք են լուրջ գերզգայնական հակազդեցություն, բարձր ջերմություն կամ վարքի փոփոխություններ: Լուրջ գերզգայնական հակազդեցության նշաններ են՝ շնչելու դժվարություն, խոպոտ ձայն կամ հծծում, մաշկի այրոց, գունատություն, թուլություն, սրտի արագ տրոփում, կամ գլխապտույտ պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչեւ մի քանի ժամ:

Ի՞նչ պետք է անեմ

- Հեռաձայնեք բժիշկին, կամ հիվանդին շուտափույթ կերպով տարեք բժիշկի մոտ:
- Հայտնեցեք ձեր բժիշկին եղելության մասին, թվականն ու ժամանակը եւ ե՞րբ է տրվել պատվաստը:
- Պահանջեցեք ձեր բժիշկից, բուժքրոջից կամ առողջապահական բաժնից Vaccine Adverse Event Reporting System (VAERS) ձեւ լրացնել կամ դուք ինքներդ հեռաձայնեք VAERS 1-800-822-7967:

6

Պատվաստի Վնասների Հատուցման Պետական Ծրագիր

Հազվադեպ պարագայում երբ դուք կամ ձեր երեխան ցուցաբերում եք լուրջ հակազդեցություն պատվաստի նկատմամբ, օգնության կարգով ստեղծված է պետական ծրագիր, խնամքի ծախսերը հոգալու նրանց՝ որոնք վնասված են:

Պատվաստի Վնասների Հատուցման Պետական Ծրագրի մանրամասնությունների վերաբերյալ հեռաձայնեցեք 1-800-338-2382 կամ այցելեցեք ծրագրի website-ը հետևյալ հասցեյով

<http://www.hrsa.gov/osp/vicp/>

7

Ինչպե՞ս կարող եմ իմանալ ավելին

- Հարցրեք ձեր բժիշկին կամ բուժքրոջը: Նրանք ձեզ կտան պատվաստումների մասին տեղեկատվական գրքույկի ներդիր, կամ կառաջարկեն տեղեկության այլ աղբյուրներ:
- Հեռաձայնեցեք ձեր շրջանային կամ նահանգային բաժնի ախտազերծման ծրագրին:
- Կապվեցեք Centers for Disease Control and Prevention (CDC)-ի հետ.
 - Call 1-800-232-4636 (1-800-CDC-INFO)
 - Այցելեցեք National Immunization Program-ի website-ը հետևյալ հասցեյով. <http://www.cdc.gov/nip>



U.S. DEPARTMENT OF HEALTH & HUMAN SERVICES
Centers for Disease Control and Prevention
National Immunization Program

Vaccine Information Statement
Hib IMM - 664ML- Armenian (12/16/98) 42 U.S.C. § 300aa-26